


THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ՔԱՅ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐՈ

ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏՐԱԿ, ԹԻՒ 11

ՆԻՒ ԵՈՐԻ, ՅՈՒՆՎԱՐ 22, 1898

ԳԻՆ 3 ՍԷՆՈ

ՎԵՐՋԻ ԶԱՆԴԻՍԸ

Անցեալ Շաբաթ երեկոյ տեղի ունեցաւ Ազգ. Հոգաբարձութեան մեծ Հանդէսն Բաքաթիւ Քաղաքի Հօլ ժողովարարահին մէջ, ի ներկայութեան 600ի չափ բազմութեան մը երկուսու ազգայնոց: Շատեր հեռաւոր անդերէն եկեր էին ներկայ գտնուիլ այս բարենպաստակ հանգիստին և ժողովարարահին իր սովորական զարդարէ գաս մասնաւոր զարդարանք էջեր կրեր: Իրան Տիգրիսի վարչութեան օթեակը զարդարուած էր Հայկական և Ամերիկեան դրօշներով, որոց մէջ Լեւոնտիս անունն գրուած կար խոշոր տառերով: Օթեակին երկու կողմերն իրար դէմ դրօշներ որոց մէջ Տիգրիսի Հայ Երեւոյն, և Տիգրիսի Հայ Երեւոյն Լրագրին անուններն ունեցած տառերով: Միւս օթեակներն մի քանի բացառութեամբ միայն գրուուած էին այն Տեառն ու Տիգրիսի հողմանէ, որոց անուններն արդէն հրատարակած էինք մեր առջի թուով:

Հանդէսը բացուեցաւ ժամը 8 ու կէսին Տ. Յ. Ս. Թաւադանեանի նախագահութեամբ, որ Պ. Թաւադանի նախանուագէն վերջ բացման համարու առաջին խօսքու: որով բացարեւել շատերն ինչպէս անսովորական յայտնեց ժողովարարահին որ եկած էր քաղաքի զայն, ու ներդրութիւն խնդրեց ինչ ինչ պակասութեանց համար, զորս կարելի էջեր եղած զարմանել ժամանակի սղութեան պատճառաւ:

Հանդիսականք մեծ հաճութեամբ մտիկ ըրին Տիգրիս Ծառերանի արմուհիքան որով նուագիչ Պարոնն մի քանի ընտիր եղանակներ նուագեց: Պարոնի կատարիկան զաշնակի վրայ անց քանի մը ընտիր կտորներ որք մեծ ընդունելութիւն գտան: Օր. Պրաթիսի Տիգրիսի Անգլիկներն մէկ արտասանութիւնը խոր տպաւորութիւն ձգեց ժողովարար վրայ, որ սըրտագին ծափահարութեամբ բեմ կոչեց զայն նորէն. այս անգամ Հայերէն մի բանաստեղծութիւն արտասանեց Օրիորդն, որոյ մի ծաղկափունջ նուիրուեցաւ ծափահարութեանց որտախն մէջ: Տ. Հէրմըն Բոլոնայի, Գերմանացի պարոնն որ թէև մաս առած էջեր յայտագրին մէջ, բայց հաճեցաւ քանի մը ընտիր կտորներ նուագել զաշնակի վրայ, ժողովարարի ոգևորութեան աւելի զարկ մը տալու համար: Տիգրիսի Գրականութեան տրկար ըլլալով չի կատարեց իր մաս, և Տիգրիսի Գրականութեան հիւանդութեան պատճառաւ՝ բաժակայութիւնն ժողովարարը զրկեց յաջող բեմասացէ մը որ պիտի երգեր միան-

գամայն: Յայտագրի առաջին մասը Լրացաւ Օրիորդ Ծառերանի Անգլիկներէն արտասանութեամբ որ մեծ ընդունելութիւն գտաւ հանդիսականներէն:

Ժամը 10ի մօտ էր երբ ընդունուած նուէրներու աճուրդով վաճառուեց սկսեց: Տ. Թաւադանեան աճուրդագետի պաշտօնն կատարեց, արհեստագէտի մը յատուկ յաջողակութեամբ, ու վաճառեց բոլոր նուէրներն, որոցմէ գոյացաւ 400 տոյարի չափ հասոյթ մը:

Նուէրներու թիւը 250ի չափ էր, որք արուած էին մասաւորապէս 100 տարբեր անձերէ: Թէև խոստացած էինք նուիրատուաց ու նուէրներուն անուններն հրատարակել այս թուով, բայց տեղւոյ անձկութեան, և ցուցակի չափազանց ընդարձակութեան պատճառաւ հարկ սեպեցինք զսոց աննել զայն: Սակայն գաղափար մը տալու համար այսչափս հարկ է ըսել թէ նուիրատուաց ցանկին մէջ զԵԼԽԱՆՈՐ տեղ կը բռնեն հետեւեալ անձինք իրենց կարգաւ: Տիգրիս և Տիգրիս Յ. Ս. Թաւադանեան, Տիգրիս և Տիգրիս Բէլէկեան, Տ. Չաւարեան, Երազմեղարք, Տ. Ծառերան, Իւզիւքեան եղբարք, Տ. Տեառն եղբարք, Տ. Սիման և այլք: Գնողներու մէջ նմանապէս յիշեալ անձինք իրենց կարգաւ զԼԽԱՆՈՐ տեղ մը գրառած կ'են:

Աճուրդը տեւեց երկու ժամէ աւելի, որմէ վերջ կէս ժամի գաղար մը արուեցաւ, երբ հանդիսականք առիթ ունեցան թեթեւ ճաշ մ'ընելու: Յայտագրին երկրորդ մասը կէս զիշերէ վերջ սկսեցաւ Օր. Սեղբոսի մի արտասանութեամբ: Օր. Սեղբոսեան յաջողութեամբ արտասանեց իր կտորն լաւ ապաւորութիւն մը ձգելով ժողովարար վրայ: Երկու երիտասարդներ քանի զուարճալի խաղեր կատարելէ վերջ, Չանգալեան եղբարք մարմնամարզութեան փորձեր ըրին: Էթէրեան եղբարք Ամերիկեան կատարիքութիւնն նուագ նշանակելի դէպք մը էջեր այդ երեկոյ:

Ժամը առաւօտեան 2 էր երբ Հանդէսն գոցուեցաւ, և Տ. Չաւարեան շնորհակալութեան քուէ մը առաջարկեց նոր Հոգաբարձութեան, իւր տուած այս արդիւնաւոր Հանդիսին ու անխնայ աշխատութեանց համար: Ժողովարարն յոտնկայս և մեծ աղաղակներով սղջունեց իւր Հոգաբարձութիւնն՝ գնահատելով անոնց աշխատութիւնը: Թէև իրաւ է որ մեր ժողովարարը շատ կը քննադատէ, երբ սակայն տեղն ու առիթը ներկայանայ, գիտէ նաև գնահատել իր արժանաւոր գործիչներն:

Այս հանդիսի եկամուտը եղաւ ընդամէնն \$551.75:

ԳԱՂՏՆԻ ԻՐԱՏԷՆ

Ահաւասիկ պատճէնը այն իրատէին որ Սուլթանը գաղտնապէս ուղղեց իր բոլոր նահանգաց Կուսակալութիւններուն: Երեք չորս ամիս առաջ մեծ Պետութեանց դեսպանները որոշեցին քննութիւն մը կատարել բոնի կրօնափոխութեանց, կուսապըզձութեանց և հարեմներու մէջ արգիլուած Հայ կուսանաց և պատանեաց մասին: Սա առթիւ 1 Սեպ. 97 թուականաւ Երզրզի պալատին և Համիդիին առաջին քարտուղար Թահսին Պէյ հետեւեալ գաղտնի հեռագիրը զրկեց բոլոր նահանգաց Կուսակալութիւններուն:

Պետութեանց Հիւպատոսներուն հրաման արուած է (իրենց կառավարութեան) քննութիւն մը կատարել Անաթոլի մէջ գտնուած Հայերու թուայն վրայ: Իրենց դժբաղդութեան մէջ գտնուած որքերու, բոնի իսլամացած անձերու և իսլամներու քով գտնուած Հայ պատանիներու և կոյսերու վրայ: Վերջապէս Հայոց ընդհանուր թշուառութեան վրայ, մասնաւոր մշտնջենական բանտի դատապարտուածներու մասին:

Ուրեմն քանի որ ճանչցուած է թէ Հայերն են պատճառ այս ամեն թշուառութիւններուն (?) քանի որ անոնք կազմակերպեցին բոլոր այս խռովութիւնները (??):

Գանի որ Տաճիկ կիները և կոյսերը են որ կը գտնուին Հայերու քով և բռնաբարուած են անոնցմէ, և թէ ամենեւին ո՛չ Հայ կիներ, ո՛չ օրիորդ, ո՛չ պատանի չեն գտնուիր Թուրքերու քով, և հակառակ այս ամենուն շարունակ քննութիւններ կը կատարուին զանոնք (Հայերը) իւր զոհեր ցուցնելու, Հայերը և իրենց այս փորձերը կը դատապարտուին Կայս. կառավարութեան կողմէ: Ուստի երբ որ գիտնաք թէ Հիւպատոսները կը գործեն այս նկատմամբ. դուք պարտիք առաջ առնելու այս ստախոսութեանց և զըրպարտութեանց, որոնք կրնան Կայս. կառավարութեան նեղութիւններ պատճառել (') պէտք է անմիջապէս ամեն միջոց իւրորդ գնէք արգիլելու և միևնոյն ժամանակ մեզ իմաց տալու ինչպէս որ կը պահանջէ հաւատարմութիւնը և անձնախորհրդները:

Եթէ դուք գործէք ուրիշ տեսակ, պատասխանատու էք որպէս դաւաճան պետութեան և իսլամութեան: Միևնոյն ժամանակ տշխատեցէք Հայերուն վրայ բարգել բոլոր այս չարեաց պատասխանատուութիւնը: Այս իրատէն գրուեցաւ Նորին Կայս. վեհ. Սուլթանին հրամանաւ ի ձեռն առաջին քարտուղար Թահսին Պէյի 1 Իւլու (Սեպտ.) 1313 (1897) և հեռագրուեցաւ: Ուստի կը հրաւիր-

ուիք գործել իրատէին ոգոյն համեմատ, չը խնայելով բոլոր կարելի ունկարելի միջոցները:

Այս գաղտնի հրամանը երբեք չի պալատէն ու է... միջոցաւ հաղորդուելով Ֆրանս. դեսպ. գործակատար (ի բաժակայութեան Գամպոնի) Պ. տ'ա Պուլենիէի, զրկեցան Բարիզ և հրատարակուեցաւ Ֆրանսական բոլոր Լեւոնտիցայ, ի մասնաւորի Հայասէր Պ. Շարմըթանի Արևելքի գործեր աշխույժ գրգոյկին մէջ: Մենք ոգտակար համարեցինք զայն թարգմանել և ծանօթացնել ընթերցողներուն:

ԱՐՄՐՈՒՆԻ

Հ ԵՌԱԳԻՐ ՈՒՍԹՐԸՆ

Յունվար 18.

Եմբարգու թիւն Տիգրիսի Միտուդի Հանդէսը շատ փառաւոր եղաւ. հինգ ժամ տեւեց. Եկեղեցւոյ համար 420 տոյար հանգանակուեցաւ, թէև ժողովարարը նուագ էր: Հանդերձ խորին շնորհակալութեամբ առ ժողովարարն Ուսթըրի Մեամ Աղօթարար ՄԱՇՐՈՑ ՎՍՐԴԱՊԵՏ

ԲՈՂՈՔ ՄԸ

Փրովիտէնս, 17 Յունվար. Տէր Խմբագիր

Կուգամ հերքել Տիգրիսի 10րդ թւոյն Գաղաքական Տեսութեան այն պարբերութիւնը որ Հայ Յեղափոխութեան կը վերաբերէր, և Ձեր սուղադրութիւնը կը հրաւիրեմ որ այսպիսի գրիչներու աշխույժ հսկէք:

Յօդուածագիր Պարոնը կերելի Պանք. Օսմ. գրաւման բարձրութեան վրայ բնաւ գաղափար չունի, որուն համար Տէյլի Նիւզ ըսաւ Ազգ. Յեղ. Պատմութեան մէջ առաջին անգամն է որ տեղի կունենայ բարձր և նշանակելի գործ մը: Կը յանձնարարեմ յօդուածագիր Պարոնը, որ այդ ժամանակի Անգլիական և Եւրոպական թերթերն աչքէ անցունէ:

Այդպիսի գրուածքները ուրիշ բան չեն, բայց եթէ Հայկական Յեղափոխութիւնը սրբապղծել, և Հայ դատին համար նահատակուած հերոսներու անունը արատաւորել: Ձեր սուղադրութիւնը հրաւիրելով, կը խնդրեմ այսպիսի գաղափարներու տեղի չտաք:

Թ. ՃԱՍԱԼԵԱՆ

ՆԱԽԱՅԻՆՔ

Երէկ հասան, ՍԹ. ԼՈՒԻՉ Սառութամբընէն Այսօր գալիք, ՍԻՕՉԻՍ. Հալքէն Վաղը կսպասուի, ՆՕՄԱՏԻ Կիւլբուրուէն



ՇԱՐԿԱԿԱՆ ԲԱՆԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ... ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ

ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

Տարեկան	ՏՂ. ՍԺ.	Տարեկան	10 Ֆրանք.
Վեցամսեայ	50	Բաժանորդագրինն ԿԱՆՈՒԿ	
Շաբաթսեայ	75	Վճարելի է միշտ:	
	40		

Երար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝

To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱՐԿԱ, ՅՈՒՆՎԱՐ 22 1898.

ՆՈՒՄՐԱԿԱՆ ԱՁԴԵՐ

—Տիրար Յակոբ Բարակեան բարեհաճած է Ուսման մէջ մեր գործակալութիւնը ընդունիլ: ՏԻԳՐԻՍի բաժանորդագրութեան և այլն գործերու համար դիմելու է իրեն.

45 Էքսչէնճ փողոց, Ուսման-Մաս

—Տեղւոյ անձկութեան պատճառաւ ստիպուած ենք մանրալուրճ, քաղաքական և այլն շատ մը թղթակցութիւններ դուրս թողուլ այս շաբաթ:

—Մեր այն բաժանորդք որոց բաժանորդագրութիւնն կը լրանայ յաջորդ թուով, թող հաճին վերանորոգել զայն, եթէ կը փափաքին որ իրենց թերթերը շարունակուին:

ՆՈՒՄՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

—Պ. Պարտիզպանեան օրինակ մը ՏԻԳՐԻՍ նուիրեց Ռուսական Բէռլինէն քաղաքի Ազգային վարժարանին, առջի թուէն սկսեալ:

—Պ. Տ. Բէլէկեան երկու օրինակ ՏԻԳՐԻՍ նուիրեց Սալմասթի Ազգային վարժարաններուն:

Հ Ա Յ Ո Ր Բ Ե Ր

Ողորմութիւն Արէք Պարոն Անտուն Անտէր Որբերին:

Որբերու խնդիրն օրուան ամենէ աւելի այրուող հարցն է Հայ ազգին առջի: Վերջի կոտորածներուն զոհ գացող հարիւր հազար նոր մարտիրոսաց զաւակներն՝ մեծաւ մասամբ՝ անտուն, անտէր, հայր ու հանգրծի կորստ կը թափառին անխնամ՝ Աստուծոյ երկնից կապտոյտին ներքեւ: Վերջի տեղեկութեանց նայելով այս դժբաղդներուն թիւը 60,000ի կը հասնի այժմ, որոց մի խիստ աննշան մասը միայն Հայոց կամ այլազգեաց հովանիին ներքեւ կրցած է պաշտպանութիւն և պատասխարան գտնել: Ահաւասիկ նոր կոտորած մը որ առաջինէն շատ աւելի ահեղ ու սոսկալի պիտի ըլլայ, եթէ ջանքեր չըլլան վատնգին սողնակ աննշան համար:

Վեհափառ Սուլթանը(?), կոտորածներու անկասկած հեղինակն՝ ուղեց վերջերս իւր բարձր հովանիին տակ առնել այս որբերն—իր զոհներու զաւակներն—զանոնք խնամելու ու կրթելու համար: Գայլը գառնուկներուն պահպան ըլլալ կուզէ: ...

Արտասահմանի լրագիրներն կը հաղորդեն թէ վերջերս Ս. Պատրիարքը Սուլթանի դիմած ու անոր զթուեթիւնն խնդրած է այս փոքրիկ թշուառներուն համար: Մեծ դաճակալեւ սաստեղ է Օրմանեան Սրբազանին բռնակ թէ Հայերն եթէ անկարող են իրենց որբերն հոգալ, նորին Վեհափառութիւնն իր հայրախնամ բարձր հովանիին պիտի տարածէ մեր դժբաղդներուն վրայ: Հարկ չէ ըսել թէ ինչ է հետեւութիւնն այսպիսի հովանաւորութեան մը:

Առաջի կոտորածներն արգիլել Հայ ազգի կամքէն բոլորովին անկաս էր, բայց այս նոր սպառնալիքն դարձան են զուրս չէ մեր կարողութենէ, եթէ կամք ու փափաք ըլլայ մեր մէջ: Հայ ազգն ի Հայրենիս մեծ դեր մը չի կրնար ունենալ այս խնդրի մէջ: Ինչ բացառութեամբ Հայ ժողովուրդն օրապահիկ կարօտ վիճակի մը մէջ է հոն, անոնցմէ քիչ օգնութիւն կրնայ ակնկալուիլ որբերուն համար: Թրքահայը իր կեանքը տուաւ, արտասահմանի գաղթականութիւնը աւելի նուազ արժէք ունեցող բան մը — դրամ—տալ պարտին անոնց որբերը հոգալու համար: Մեր նոր մարտիրոսաց անձանօթ գերեզմաններէն բարձրացող բողոքոյ ձայներն մեր ակնջին կը հասնին այսօր: Եկեղեցիէ, վարդապետէ, Հոգաբարձութենէ և այլ ամէն խնդիրներէ աւելի կարեորութիւն ունի այս, զի կեանքի և մահու խնդիր մ'է՝ բառին բովանդակ նշանակութեամբ:

Հայ գաղթականութեանց Ամերիկայի խումբերը, որք մեծ ազմուկ հանելու մէջ վարժ են յոյժ, մեծ բաժին մ'ունին այս կարեոր գործին մէջ: Մեր գաղթականութիւնը, որք կը պարունակեն բարեկեցիկ դաս մ'ու ամէն կարեոր տարրեր, հրաշքներ կրնան գործել հոս եթէ կամք ու փափաք չի պահելն որբերն խնամելու համար: Նիւ Եորք և շրջակայից գաղութը միայն բաւական է քանի մը հազար որբեր արեւելքի Մեծ Մարգասպանին ճիրաններէն ազատելու համար:

Նիւ Ինկլընտի մի քանի քաղաքներուն մէջ սկսած է այս խնդիր ժողովուրդին մտքերն յուզել: Օգտակար քայլեր առնուած են արդէն Ուսման մէջ: Պօսթօնցիք այս մասին «Եօթն»-ը կազմած են, և Օր. Ալիս Պլաքուէլ իր նիւթական ու բարոյական աջակցութեամբ մեծ զարկ մը եղած է այս գործի յառաջդիմութեանը համար: Ուր են, ինչ կը նշեն միւս գաղութներն: Ուր է Նիւ Եորքը, որ իր ծոցին մէջ ունի գաղթականութեանս «միլիոնաւորներն ու բարեկեցիկ դասակարգի ստուար բազմութիւնն:

Ալ ժամանակը չէ՞ որ ասոնք շարժին, գէթ ազգին ապագայ սերունդը փրկելու համար: Կղերի, կեղեցիկի և Հոգաբարձութեան տիրացուական կուռները ալ ասանն է որ վերջ գտնեն: Վասնզը մեծ է. չի կայ զբաղելու կամ սպասելու ժամանակ: Կուր ընկըլ յանցանք է միշտ, այլ այս պարագաներու տակ ոճիւր մէջ ազգային քառնելի եղբեր են անհատական ու անձնական խնդիրներով զբաղել: Այս թշնամին այս կամ այն կուսակցութեան չի վերաբերիր: Բոլոր ազգին անխոր վնասելու բնութիւն ունի այս ահռելի վտանգը, որուն ընթացքը արգիլելու համար ամէնու միացեալ աշխատութեան կը կարօտինք: Մերի, նօթի, անհայր ու անմայր հազարներ կան անդին հացի, հագուստի և կրթութեան կարօտ, մինչ մենք ասդին՝ մեր տաքուկ սենեկին մէջ հնարքներ կը խորհնք գրեթե ատպակելու համար:

Քաղաքիս ու շրջակայից գաղթականութեան վրայ մի մասնաւոր պատասխանատուութիւն կը ծանրանայ այս մասին. եթէ չի կարողացանք-որպէս վայել էր-նախաձեռնարկ ըլլալ այս խնդրի մէջ, գէթ փութանք միւս քաղաքներու օրինակին հետեւելով, մեր դերքին վայել քայլ մտնեն՝ աս ազգային ծանր բեռը մասամբ թեթեւեցնելու համար: Ուր են անոնք, որք դեռ վերջերս մի նոր սուպարէլ կը փնտռէին գործելու: Ահաւասիկ յարմար առիթն ու պարագան գափնեայ պակ մը խելու համար: Ուր են այն մեծատունները որք ազգային պաշտօն մը ձեռք ձգելու և տեղէն էին վերջերս. Գալտօններու մեծազոյն ինքնին կամ էլ արժանաւորին ի խնդր: Հրապարակ թող գտն այս ազգայիններն, ու հասկացողութեան մը բերին քաղաքիս ու շրջակայից բոլոր ազգային ու կրօնական հաստատութիւններն՝ այս մասին միութեամբ քայլ մ'առնելու համար, «իրբ և Հայ և համագրի և միւսնոյն Հայրենեաց» երկրի զաւակ:

Որք մը մահու զոհ փրկելն կեղեցիկ մը չի նշու շափ կարեւորութիւն ունի հիմայ: Կոտորածներէն վերջ, Հայ անհատին պէտքն ու արժէքը արժէքը անհամեմատ մեծ ու կարեւոր է ազգին համար: Ամէն Հայ, առանց ո՛ր և է բացառութեան, իւր հացը պատասխան կարծած ժամանակ յիշելու է թէ իր երկրին. ազգին ու կրօնին համար զոհուող հազարներու որբերն մերի, նօթի, խամրած ու դաւկահար իրենց կը նային օգնութեան համար:

«Ողորմութիւն արէք, պարոն, անհայր անմայր Հայ որբին...»

ՎԻՐԱՒՈՐ ՁԻՆՒՈՐԻ ՀՐԱՍԵՆՏՐ

Առ քնարդ, ով սիրական, անկողնոյս քով եկ նստէ, Դու միթիթար այրած սրտիս, ամէ մեղմիւ ու երգէ. Իմ ցաւերս բազմաթիւ են, իմ վէճքերս՝ անհամար, Մահու քրտինք դիս պատեր են. ալ յոյս չկայ ինձ համար:

Ձարհուրելի վիրաբոյժին գործընկերը արդարեւ, Միտոս ծակող վէճքի խորերն պիտ' գտն փնտռել ի դերեւ, Մահու կապարն որ ստացայ կուռն ատեն անվիճեր, Որ մեղի դէմ թուրք մ'ընցին յանկարծակի այս գիշեր:

Նայէ մէյ Ը աշքերուս մէջ. ինչ է դուր մի ջանար Արցունքներդ գաղտնի պահել, որք կը թափին ինձ համար. Հեկեկանքդ ես կը լսեմ, մի՛ լար գաղտնի, ինչ օգուտ, Մահն եկած է զմեզ բաժնել և իմ վաղահաս մահն անգութ:

Իմ խիղճ սակայն դիս չ'նեղեր, կատարած եմ իմ պարտիք Դեպ պաշտելիս իմ սիրական, իմ քարոքանք Հայրենիք. Դու ալ որբէ արցունքներդ, զի այս անցուկ կեանքէ վերջ Պիտի գրկեմ գրեզ նորէն, ամպերէ վեր՝ երկնից մէջ:

Ի՛նկ, սիրական նստէ՛ քովս, վիրաբոյժին թող մի տար Փորձել սրտիս խոր վէճքի մէջ գտնել գնտակն ու կապար, Ձի այդ խորոց մէջ ես միայն պահպանեմ եմ քո պատկեր Ձոր չեմ ներք որ անպատկառ մարդոց յուզեն զուր ջանքեր:

Մա քնարդ առ մի՛ կենար, անկողնոյս քով եկ նստէ, Դու միթիթար այրած սրտիս, ամէ մեղմիւ ու երգէ. Իմ ցաւերս բազմաթիւ են, իմ վէճքերս անհամար. Քաղցր ձայնդ միայն կրնայ զայնս մեղմել ինձ համար:

«ՈՐԲԱՆՆԱՄ ԵՈՒՆ» ԵՐ

Իրաւամբ ամենամեծ տեղերէն մին գրաւած է Ազգ. գործոց մէջ, հազարաւոր անխնամ Հայ որբերու խնդիրը: Պատրիարքարանը, և իրաց վիճակին մօտէն տեղեակ ուրիշ վարատահելի աղբիւրներ, որբերուն թիւը ի Հայաստան 50,000 ի կը հասցնեն, և պարզ իրողութիւն մ'է թէ ազգին և օտարազգաց խնամակալութեան տակ եղող որբերու թիւը շատ չնչին փոքրամասնութիւն մը կը կազմէ: Այս մի մեծ կոտորած է, որ կ'սպառնայ նահատակաց անմեղ զաւակաց. ազգի ապագայ յոյսերն են ասոնք որք կորստեան մօտեցած են: Ամեն անհատի ամենատուր պարտքն է ազատել Հայութիւնը այս մեծ հարուածէն: Երբ ժամանակ մ'առաջ կը խորհնէ մեր որոց դասն վիճակին վերայ, և կը տեսնէի միւս կողմէն Ամերիկայի Հայոց անկազմ և անխորպարան վիճակը, որ զիրենք աւելի անկարող վիճակի մը մէջ կը դնէր, ո՛ր և է ազգօգուտ գործ մը կատարելու, յղացայ խորհուրդ մը, որոյ գործադրութեան մէջ տեսնելով Հայ որոց ոմանց փրկութիւնը, սկսայ ուրախանալ, և որոշեցի անմիջապէս բան մը մարմնացնելու ջանալ:

Գանի որ ինչ ինչ պատճառներով չենք կարող առ այժմ հաւաքարար գործել, և հաւաքարար գործելու փորձեր կուրի և երկպառակութեանց միայն առիթ տալով՝ ուրիշ կերպով օգտակար ըլլալիք ոյժերը կը չեղուցանեն, և քանի որ ամենքնիս ալ, քիչ բացառութեամբ կը փափաքեմք գործել և օգնել ազգին, մասնաւոր մեր որբերուն, լաւ է գտնել միջոց մը որ մեր վիճակին և ներկայ տրամադրութեանց յարմար զայն:

Երբ որ ծնականապէս լուստ են այս խնդրը ինչպէս ծանօթ է անմեծուն, զանազան գիւղացիք ունին իրենց կրթական ընկերութիւնները՝ զիւրացի վարդերու հոգ պատնել համար, և սոքա ոմանք մինչ և 5—6,000 տուրքի շափ դրամադուլս իսկ հաւաքած են չնչին շարաթափվարով: Եթէ մեր այս եղբարք փոխանակ զատ զատ գործուր, բոլոր գիւղացիք մի մեծ ընկերութիւն կազմել ջանային, երբեք չը պիտի յայտնէին:

Որհնցայ թէ քանի որ 20—25 տուրք տարեկան ծախսով որք մը կրնայ պահուիլ ի Տաճկաստան, հետեւապէս 7 հոգի, օրական մէկ սէնթ տալով կրնան որք մը պահել, և թէ շատ զիւրին է ո՛ր և է մարդու մը եօթը բարեկամներ գտնել և անմիջապէս կազմել խմբակ մը «Որբախնամ եօթի»՝ անունով կամ, ինչ անունով որ կուզեն իրենք իրենց մէջ, նպատակ ունենալով Հայ որք մը պահել օրական մէկ սէնթով: Գրեթէ առաջին վեց հոգիներ որոնց որ առաջարկեցի սիրով ընդունեցին անդամակցել և կազմել առաջին «Եօթ»ը: Բազմօգուտ Հայաստանի Օր. Ալիս Սթոն Պլէքուէլը սիրով յանձն տուած է թէ անդամակցութիւնը և թէ Գանձապետութիւնն որ է ան գործադիր մարմին «այլախախնամ եօթի»:

Կը յուսանք թէ անմիջապէս շատ խմբակներ պիտի կազմուին Ամերիկայի Հայոց մէջ, և քիչ ատենէն առնուազն քանի մը հարիւր որբեր ազգային որբանոցներու մէջ պիտի խընամուրն: Մենք ուղղակի Ազգ. Պատրիարքարանի խնամոց պիտի յանձնենք մեր որբը: Փափաքելի է որ բոլոր խմբակներ երբ կազմուին, զբերեն և տեղեկացնեն այս մասին Ս. Փրկիչ Եկեղեցւոյ հովուին, յուսմբ: վատահ ենք թէ նորին Արժանապատուութիւն Տ. Մաջից վարդապետ խնամով պիտի արձանագրէ և պար-

Բերարար պիտի տեղեկագրէ Ազգ. թերթերու միջոցաւ:

Կաթիլը շատ փոքր է, բայց ահազին Ովկիանոսը անոնցմէ է բազկացեալ: Օ՛րն, սիրելի Հայ եղբարք, կազմեցէք խմբակ եօթեր, դրէք փոքրիկ գանձանակներ ձեր սենեակները, և մի միայն օրական մէկ սէնթ տուէք ձեր ազգի մերկ ու բոսորի ահոթի և ծարաւ որբերու սիրոյն, և ահա Ձեր կաթիլներ հրաշքներ պիտի գործեն: Ընդունեցէք ձեր եօթէն մին կամ աւելին իբր գործադիր մարմին խմբակի: որ շուտով ուղղակի կամ կեդ. Հովուութեան միջոցաւ յարարութեան մասին Պատրիարքարանի հետ, և սկսին պահել իրենց որբը: Խորհեցէք անգամ մը օրական մէկ սէնթ միայն տալով կ'ազատենք Հայ դաւակ մը կորստենէ: Ո՛վ գիտէ կարելի է նոյն իսկ Վարդան մը կամ Ներսէս մ'է, Բաֆֆի կամ Արծրունի մ'է որ կը մեծցնենք ու մահուանէ կ'ազատենք: ՄՈՒՇԻՐ

Յ. Գ. Որչափ օգտակար և շինչ ձեռնարկ մը պիտի ըլլայ այս նաև փոքրիկներէ կամար: Կը խնդրուի ծնողներէն որ ոչ թէ միայն իրենք կազմեն և պատկանին խմբակներու այլ իրենց դաւակները քաջալերեն, և նոցա մէջ ալ կազմեն խմբակներ օգնելու իրենց նամակներուն, որոնք Հայր կամ մայր չունին երջանիկ օճաթ մը պատրաստելու իրենց և լաւ կրթութիւն մը ապահովելու համար:

ԱՌԱՋԻՆ ԵՅՈՒՆԵՐԸ

Մեր թղթակիցներէ մին զրկած է մեզ հետեւեան, որ թարգմանած է Օր. Պաքուէլի գրութենէն, զայն կը քննարկենք շնորհակալութեամբ ամեն Հայր խորին ուշադրութեան յարարութեամբ:

Քննիչ որ տարեկան 25 տարով կրնայ Հայ որբ մը պահուիլ ի Հայաստան, ո՛ր և է եօթը անձինք իբրմբակ մը կազմելով և իւրաքանչիւրը օրական սէնթ մը տալով տարին որբ մը կրնան խնամել: Յունվար 9ին իբր նամակալ խմբակ մը կազմուեցաւ առ այս նպատակ յԱրթ. Մաս, որոյ անդամք են:

- Օր. Ալիս Սթոն Պէքուէլ
- Մաթեմիկ Պարտասարեան
- Տր. Գառնիկ Էքսէրճեան
- Յակոբ Գալէմքէրեան
- Միքայէլ Պաղտատարեան
- Գէորգ Պաքուէլ
- Աւետիս Պ. Մէլեան

Խիստ շատ փափաքելի է որ նոյնանման խմբակներ, եօթը անգամներէ բազկացեալ, կազմուին Հայերէ և ուրիշ անձինքներէ, որք կը փափաքին օգնել որբերուն: և թէ իւրաքանչիւր խմբակ երբ կազմուի, հաճի տեղեկացնել զԱրթ. Մաթոյ վարդապետ, Ուսթըր Մաս. որ կը տեղեկացնէ Ազգային Պատրիարքարանին և պարբերաբար կը տեղեկագրէ Ազգ. թերթերուն: Այս գաղափարը այս առաջին խմբակի անդամաց մին յղացած և առաջարկած էր ժամանակ մ'առաջ, որը նպատակի որբութեան հետ պարզութեան զբոսումը ունի, կարելի կընէ ո՛ր և է եօթը բարեկամներ անմիջապէս կազմակերպուելու, և առաջին տարեվրձարներին կանխաւ տալով որբ մը խնամել սկսելու, առանց երբէք ըսպատելու ուրիշներուն: Իւրաքանչիւր եօթը կընտրէ իր Առեմապետը և Գանձապետը, որը զբարձր կը զրկէ ուղղակի ի Պաղտատար. Պատրիարքարանին:

Պօսթոն, Յունվ. 12, 98.

Վարժուհին—Յետեւ մէկ մատով արեւը կեցուց
Աշակերտուհին—Երէկ մայրս մատով Բէյալը-Քարը դարձրեմուց:

ՓՐՕՎԻՏԷՆՍ

(Մեր մասնաւոր թղթակցէն)

Երջանիկ են Փրովիտէնի Հայերը և թէպէտև ներկայ ճգնաժամին մէջ ոչ որ և է օգնութիւն մը ըրած են հազարաւոր որբերուն, ոչ ալ ընդհանուր կերպով ձեռնարկած են օգնելու յեղափոխական գործին, բայց իրենք նորէն երջանիկ են որովհետէ իրենց մէջ մուտք գտած չեն տակաւին Վարդապետ-Հոտարարձուներու զղուելի կուրները: Որչափ որ կըցայ տեսնել այս կէս շարաթոռայ ժամանակամիջոցին մէջ, ժողովրդի մեծամասնութիւնը, եթէ ոչ ընդհանրութիւնը, ընդհանուր առումով գոհ է իւր յովուէն ալ, ճողաբարձուներէն ալ, և Հովուէն ու Հողաբարձուներէն ալ մասնաւոր պատճառներ չունին իրարմէ դժգոհ ըլլալու, Միեթարար այս կացութիւնը, անտարակոյս, Պատուարներ է թէ Տ. Վաղինակ հօր և թէ Հողաբարձութեան, որուն անդամները փորձառու և ժողովրդական անձերէ բաղկացած է:

Կաղանդի և Ծնունդի տօները շատ հաճելի կերպով տօնեցին Փրովիտէնի Հայերը, Զանգեր խնայուած չէին կատարելու համար այս տօները Հայրենական սովորութիւններուն համեմատ որքան որ կը ներքին տեղական հանգամանքները, Տ. Վաղինակ Հայրը յատուկ նամակներով խնդրած էր գործարանատէրերէն որ Ծնունդի օրը թոյլ տան իրենց քով աշխատող Հայերը չը գործելու: Գործարանատէրերը սիրով կատարեցին Տ. Վաղինակ հօր խնդիրը:

Անցեալ Հարաթ գիշեր իրենց ընդարձակ սրահին մէջ Փրովիտէնի Հայերը պարահանդէս մը ունեցաւ— եթէ կարելի է այսպէս ըսել— յիշատակելու համար Հայրենական Կաղանդի սովորութիւնը: Եթէ հանդէսը շատ խնամքով ու հակողութիւնով պատրաստուած չէր, սակայն շատ հաճելի էր որ այս միջոցով մտաւորապէս 300 Հայեր, փոխանակ տուներու առանձնութեան մէջ, ճաշարաններու թղթախաղի սեղաններու շուրջը անցնելու, եկած էին իրարու քով: Գէթ հաւաքուած կը յիշեցնէր մեզ Հայրենիքի կազմադիր մը բոլոր սիրուր— ուրախ յիշատակները:

Երկէր կըսէ թէ «չարերը երգ չունին»: Փրովիտէնի Հայերը ոչ թէ միայն երջանիկ են, այլ նաև բարի, որովհետև երգելու և նուագածուներու խումբեր կազմակերպած են որոնք այս տեսակ հանդէսներու զարդերն են:

Միևնոյն սրահին մէջ, յաջորդ գիշերը, տեղի ունեցաւ Լսարանի ժողով մը: Տքթ. Սէֆէրեան խօսեցաւ սկուաներու առողջապահութեան վրայ, Պ. Թ. Չարաֆճեան հրատարակելով ժողովրդի ուշադրութիւնը դարցուց թշուառ Հայ սրբերուն վրայ:

Շատ օգտակար և շնորհակալութեան արժանի էր Տքթ. Սէֆէրեանի ձեռնարկը, աւելի օգտակար և շահեկան պիտի ըլլան իւր յաջորդ «Լէքչըրները», ինչպէս որ խօսաւորապէս, եթէ աւելի հետաքրքրական ոճով մը բացատրէ գանձը: Ատանանարոյժութեան ուսանողներու դասարանի մը մէջ կը մարտնչին իւր բնածնոր գիտական իրողութիւնները, բայց ոչ այնքան զիրութիւնով ընդհանրապէս ոչ-գիտական լսողներէ: Պ. Բօլոլեանի գաւել տակաւն բժշկութեան ձեռք համակերպիլ ատանարոյժին ուշադրութեանը կը յանձնարարեմ:

Այս շարժումը Հայկական քաղաք մը կը կարծէր մարդ ինքզինքը Փրովիտէնի մէջ: Ճրագաւորյի տօնը և պատարագը երկուշարթի գիշեր, և Երեքշարթի շատ կանուխ ալ Ծնունդի առաւօտեան ժամերգութիւնը կատարեց Արթ. Վաղինակ Հայրսուրբը:

Գաղութի մեծամասնութիւնը լեցուած էր իւր—հօլ— եկեղեցին. կը թուի թէ Փրովիտէնի Հայերը աւելի ջերմեանք են դէպի իրենց շինծու սրահ-եկեղեցին քան Ուսթըրի Հայերը իրենց տարիներէ իվեր կանգնուած Ս. Փրկիչ Եկեղեցին:

Կը մնայ տեսնել թէ երջանիկ բարի, կրօնասէր Փրովիտէնի գաղութը ինչ չափ դրական օգուտ պիտի ընծայէ թշուառ Հայ որբերուն:

Յունվար 18

Վ Է Ի Ք Ե Ր

Ամերիկայի Հայոց կեանքին մէջ կան շատ մը բարոյական վէրքեր զորս հարկ կը սեպեմ թուել հոս: Առաջինը, անուանափոխութիւն, երկրորդը՝ Բաքոսի երկրպագութիւն, սա տարբերութեամբ որ խունկի տեղ գարեջուր կը ծխեն, երրորդը՝ շոտլանդութիւն ու ախտերով վարակում, չորրորդը՝ կաշառ կերցնելու մասնագէտ ճարտարութիւն, չինգերորդը՝ կրօնական խնդիրներու ջրհեղեղը:

Առնց վրայ աւելցնուր ժամանակի աննպաստ պարագաներն ու պայպայմանները, Հայրենիքէն Ամերիկա խուժող սովորութիւնները, Ամերիկայի ալ անգործածութիւնը, այն ատեն արդէն առանց իմ թեւադրութեան պիտի ըսէք «Ահա՛ ժողովուրդ մը որ երջանիկ է»:

Անուանափոխութիւն ըսելով քիչ մը անորոշ հասկցուեցաւ: Հայն՝ Օտարամոլութիւն անուանով ախտ մը ունի որ շաք հնուէ և, և որ Ամերիկայ աւելի յղկած ու կոկոխ է: Յովհաննէսը՝ ճան, Պատարձը՝ փիթըր, Կարապետը՝ Չարլի կոչելը մասամբ մը կրնայ արգարացուիլ, սակայն ինչպէս չբնական անոնք որոնք Մարտիրոսը՝ Մարթին, Միքայէլը՝ Պարնել, Յարութիւնը՝ Հէրիք և այլն: Ո՞վ է այն որ նոյն իսկ իւր եղբայրը այս մտկանունով եթէ կոչենք, պիտի կրնայ ճանչնալ: Ինչպէս ըսի, այս՝ վաղեմի ախտ մ'է որմէ ազգովին կը տառապայինք, ամեն երկրի մէջ ալ այդ օտարամոլութեան գանազան պատուները վայելած ենք: Շատ տեղեր գէթ մականունան «ՅԱՆ» կը վերցնեն, բայց հոս բոլոր մականունը կը փոխեն: Ամերիկայի մէջ մտիք շատ ճաշարաններ կը խօսին, մեր լեզուն շատ անձուկ կուգայ իրենց, մեր վսեմ գաղափարները բացատրելու համար: ԵՐԿՐԱՇԱՐԺ

Յունվար 11, Լին, Մաս.

ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Բարեսիրական Ընկերութիւնն իր տարեկան ժողովը ունեցաւ ու պաշտօնէից ընտրութիւն կատարելով հետեւեաններն ընտրուեցան:

- Տիկին Ի. Պարոզ
- Օր. Ա. Ս. Պաքուէլ
- Տիար Լ. Յ. Աթէշեան
- » Գ. Էքսէրճեան
- Օր. Բ. Պօրգըն
- Տիկին Օ. Յ. Աթէշեան
- Տիար Կ. Յ. Փափազեան
- » Գ. Գալէմքէրեան
- » Վ. Բ. Նարզիսեան
- » Վ. Վրոյր
- » Պ. Յակոբեան
- » Տ. Յիւրիսեան
- » Գ. Կարապետեան
- » Մ. Եարտումեան
- Տքթ. ձ. Լ. Պարթն

Առնց մէջ յիշուած Ամերիկացիներն, մասնաւորապէս տիկնայք ծայրահեղ հայասէր են և այս ընկերութեան գոյութիւն և կեանքն անոնց կը պարտինք:

ԱՇՈՏ

Պօսթոն, Յունվ. 13:

ՄԵՐ ԾՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻԹԻՒՆԸ

Յունվ. 6, Պէլվի Հիւանդանոց. Մի քանի օր սորանից առաջ բրժիղը ինձ ուրախարար աւետիք տուաւ, յայտնելով՝ որ իմ հիւանդութիւնը անցել է, կարող եմ նստել և, եթէ ցանկանում եմ, կարողաւ վերջին պատուէրը այսպէս առաճ, աւելի ուրախութիւն պատճառեց, քան առաջինը, որովհետև վեց շաբաթ էր լրագրի երես չէի տեսել շարունակ, ևս ծարաւի էի և կարող չէի ծարաւս յազեցնել: Նոյն օրը այցելութեան եկող բարեկամներէս խնդրեցի լրագրիներ և յատկապէս ՏԻԳՐԻՍԻ վեց շաբաթուայ համարները, որով ես աւելի հետաքրքրուում եմ:

Իւրաքանչիւր համարը ծայրէ ծայր ուշի ուշով կարդացի. թէ որքան հետաքրքրական էին առօրեայ հարցերի մասին հրատարակուած յօդուածները, այս առթիւ լուսթեամբ կ'անցնիմք, թողնելով որ ընթերցողները, եթէ առօրեայ ընթացիկ հարցերով հետաքրքրուում են, իրանք գընահատեն նորանց արժէքը:

Իմ ուշադրութիւնս աւելի գրաւեց չորրորդ համարի առաջին երեսում հրատարակուած «Էքսուր ընտանիք մը» խորագրի տակ նկարագրուած ընտանիքին անմիջական օգնութեան հասնելու հրաւերը՝ Յարգ. Խմբագրութեան կողմից: Այս մասին ամուսինս ինձ ոչինչ չէր խօսել, թէպէտ մի քանի անգամ դրամ էր ըստացել խմբագրութեան անդամներին մէկից, յատկապէս իմ արժանապատուութեանս չ'ըպչելու և զգացումները չ'յուզելու համար, գիտնալով՝ որ ես միշտ հետեւել եմ սոյն օրէնքին, թէ «աւելի լաւ է տալ, քան առնելը» բայց... հարկ գորէնս լուծանէ:

Այժմ մեզ մտում է, առանց քաշուելու, հրապարակաւ յայտնել մեր խորին շնորհակալութիւնը՝ նախ ՏԻԳՐԻՍԻ Խմբագրութեան անդամներին ժողովրդի ցաւերի արտապայտանքով խօսքով, այլ և ամբողջը՝ գործով, պահանջեալ հարկին, և այն բոլոր անձնաւորութեանց, որոնք սիրայօժար իրենց նուիրատուութեամբ թեթեւացրին իմ բազմաշարժար ընտանիքի վիշտը:

Յատկապէս յայտնում ենք մեր շնորհակալութիւնը բժիշկներ Բարուսեանի, Միւնի և Այվազեանին: Մնամք շնորհակալութեամբ լի՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՅՐԸ

Մ Ա Ն Բ Ա Ն Ո Ւ Ր Ք

—Յառաջիկայ կիրակի օր Ծնունդի և Մկրտութեան առթիւ պաշտամունք պիտի կատարուի Ս. Ոսկերեան Եկեղեցու մէջ: Արթ. Տ. Մաթոյ վարդապետը ներկայ պիտի գտնուի:

—Վաղը առաւօտ ժամը 10ին Հայ Աւետարանական Եկեղեցու մէջ Հաղարդութիւն պիտի մատակարարուի: Պիտի քարոզէ այս առթիւ Պատ. Պէննէեան:

—Վաղը երեկոյ նոր Լսարանի մէջ պիտի խօսի Պ. Չիթճեան, նիւթ ունենալով «Ընտրութիւն և գերբնութիւն»:

—Այս թերթ մամուլ զրկուած ատեն տեղի կ'ունենար Հայ Աւետ. տօնախմբութիւնն, որոյ մասին կը գըրենք յաջորդիւ:

—Հաւաք գիւղէն Պաղտատար Բերրեան ՀարթՓրտի Հիւանդանոցին մէջ մեռաւ անցեալ շաբաթ: Տեղւոյն Հայերը տուին թաղման ծախքերը:

—Արամ Պատուելեանի քոյրը Տիկին Պապոյեան իր երկու դաւակներով Ամերիկա հասաւ վերջերս ու Փրովիտէն գնաց: Ա. Պատուելեանի եղբայրը Վահան տարիներէ իվեր անյայտ եղեր է Ամերիկայի մէջ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Պօսթօն, 17 Յունվար.

Այնքան կեղծակերտ Թուրքիոյ որևէ յԱմերիկա գտնուող աշակերտաց ընկերութեան (Ս. Թ. Ս. Ալուսի-նի ԱսասիէՅըն) երկրորդ տարեկան Ընդհ. ժողովը գումարուեցաւ Յուն-վար 15ին ի Պօսթօն, ատենապետութեամբ Տր. Ա. Եոսուֆեանի. և յետ սովորական պաշտօնական գործողութեանց ժողովը զբաղեցաւ Օրակարգի հետեւեալ խնդիրներով:

Ա. Թէ ինչպէս կրնանք կատարել մեր պարտականութիւնն առ մեր Սիրելի Գործըն:

Բ. Թէ ինչպէս կրնայ ընկերութիւնն նպաստել Ամերիկայի Հայոց մտաւոր զարգացման:

Գ. Թէ ինչպէս կրնանք օգնել մեր աշակերտաց մասնագիտական համալսարանական կրթութիւնն առնելուն:

Դ. Պաշտօնէից ընտրութիւնն և: Առաջին խնդրոյն վրայ խօսելով Տր. Գալուստեան ջատագովեց Կ. Թ. Գալէճի մէջ երկրաչափութեան կամ այլ գիտական մասնագիտ. մը հաստատելու համար մասնագիտ. դասընթացը իր մը հաւաքումը ընկերութեան կողմէ:

Պրն. Լ. Յ. Սէյրանեան և Ս. Սաղըբեան աւելի գործնական համարեցին մեր ներկայ միջոցներով արհեստանոցի մը բացումը:

Յետ երկար խորհրդակցութեան որոշուեցաւ որ գործադիր մասնա-թեմերը յարմարագոյն մասնագիտութեան և առ այն պէտք ըլլալիք ծախուց մանրամասն տեղեկութիւնը պատրաստելով յաջորդ ժողովին ներկայացնել:

Նաև միաձայնութեամբ որոշուեցաւ որ յաջորդ զարգացական տարեշրջանէն սկսելով որք եւ հանճարեղ Հայ աշակերտ մը պահէ ընկ. Կ. Թ. Գործի մէջ:

Երկրորդ խնդրոյն վրայ բանախօսելով Պր. Ա. Պ. Սէյրանեան, ըսաւ թէ Ամերիկայի Հայոց զարգացականութեան զարգացման նպատակով ամենալաւ միջոցն է ընկ. անդամոց Հայ. Լսարաններու գործակցելը, կարողագոյն աշակերտներու օգտակար նիւթոց վերջոյ հրահանգելը ատենապետութիւնը ընկելով պէտք եղած տեղեր Լսարաններ կազմակերպել. գաղութին մը տացի Պատանեաց բարձր կրթութիւնն առնելուն նպատակով. չը վարանիլ նոյնպէս աշխատակցելու Հայ. Լրագրաց, մինչև որ ունենանք մեր իսկական Հանդէսն:

Երրորդ խնդրոյն վրայ խօսելով Պ. Կ. Հեղինեան (ուսանող երկրաչափութեան ի Պօսթօն. Թէքնօրօճի) զիտել տուաւ թէ Առաջնաժամանակութեան և բժշկութեան դատ Հայ ուսանողը պարտին հետեւիլ ուրիշ ճիւղերու:

Հրաւիրեց ընկ. անդամները որ իրենց հետեւած մասնագիտութեանց վրայ որոշ Տեղեկութիւններ տան լըրագրաց միջոցաւ, նոյնպէս ընկ. մասնագիտագետ ու շաղիք լինի դիւրութիւններ շնորհել մասնագէտ լինելու պատրաստուող զաւայտոց որոնք կրնան առ այս դիմել գործադիր ժողովը Ատենապետ Պր. Ա. Սէյրանեանի, 518 Թրիմոնթ Փողոց, Պօսթօն, Մաս:

Դ. Գաղտնի քուէարկութեամբ գործադիր ժողովոյ անգամ ընտրուեցան հետեւեալք:

Տր. Ա. Եոսուֆեան՝ Ատենապետ, Պր. Յ. Մուրատեան, Փոխ Ատենապետ, Պր. Ա. Պ. Սէյրանեան՝ Ատենապետ, Տր. Ն. Մ. Գալուստեան Փոխ Ատենապետ, Պր. Լ. Յ. Սէյրանեան Օգն. Գանձապետ:

Աւելորդ չենք համարեր ծանուցանել թէ ընկ. մշտական Գանձա-

պետն է Կ. Թ. Գործի խնամակալութիւններէն Տր. Է. Տ. Բաթլյա:

Ի վերջոյ ժողովը փակուեցաւ և ժողովականք գոհունակ տպաւորութեանց տակ մեկնեցան:

Ի դիմաց Ընդ. ժող. Կ. Թ. Գործի Աշակերտաց: Ատենապետ Ն. Մ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ

ՊՈՍԹՈՆԻ ՏՄԿՆԱՊՆ

Յունվար 12.

Կը շարունակուի դեռ ևս նոյն տաղնապն որոյ մասին գրեցի շաբաթներ առաջ:

Սէնթ Փօլ Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած շփոթութիւններէն վերջ եկեղեցւոյ Եպիսկոպոսն մերժեց այլևս թոյլ տալ Հայոց իրենց պաշտամունքներն կատարել անդ: Արժ. Սաղ. Վարդապետ մօտերս մի քանի անգամ դիմեց Եպիսկոպոսին, բայց իր ուրիշ պարտութիւններէն զուրկ լինելու պատճառով չը փութան այդ Մատուց կրկին Հայոց շնորհել ի գործածութիւն, իրենք պիտի ստիպուին մի ուրիշ եկեղեցւոյ դիմել: «միջանկեալ ասած թէ այս կը նմանի Գաւառի Պատրիարքարան եկած հեռագիրներուն «մեզի օգնեցէք, թէ ոչ կը թրքանանք»»: Վարդապետ մտացած չէր յիշել թէ հին Հոգարարութիւնն լուծուած է, և նոր մը կազմուած, որով կրկին վերջացած կը համարուին: Եպիսկոպոսի պատասխանը կրկին մերժողական էր, այս հիման վրայ թէ ինք հին Հոգարարութիւնն տեսած ու ստուգած է թէ նոքա հրաժարած չեն և լուծուած ալ չեն համարուիր: Երկու խօսք ալ ընտրութեանց մասին Ընտրութիւնը տեղի ունեցաւ վարձեալ ժողովաւարակ մը մէջ (զի եկեղեցին զոյց էր Հայոց համար) ուր գտնուած են թուով շատ քիչ Պօսթօնցի Հայեր. չըջականերէն եկած էին շատ մը Հայեր որոնք արդէն իրենց քուէն իրենց տեղի մէջ տուած էին, բայց—հոս ալ ստին:

Նախկին Հոգարարութեան դէմ եղած բողոքն էր թէ անգամ ումանք Բողոքական են, և Լուսաւորչական եկեղեցւոյ ներքին գործերուն իրաւունք չունին խառնուելու: Բայց այժմ ինչ ըսենք երբ Պրն. Կ. Յ. Փ. Նոր Հոգարարութեան անգամ կը ընտրուի: Այս կը նշանակէ կամ մենք սկզբունք չունինք, կամ կը կեղծաւորենք: Մի Բողոքական Պարոն ալ երբ կը տեսնէ թէ Բողոքականաց արգիլուած է քուէ տալ. ոտքի կը կանգնի «ես բողոքական էի, կասէ, բայց ասկէ վերջ Լուսաւորչական եմ» և քուէ կուտայ:

Հին Հոգար. Ինքզինք լուծուած չը համարիր, ոչ թէ վեր յիշածս ապօրինութեանց համար, այլ որովհետև Ամերիկեան Պատրիարքարանի մը կազմութեան կապակէ, մինչև այդօրն—իրենց ըսածին նայելով—պաշտօնավարելու պայմանաւ ընտրուած են:

Անցեալ Կիրակի Կրօնական պաշտամունք տեղի չունեցաւ, զի տեղ չկար: Լաւ կը լինէր որ Արժ. Սաղ. Վարդապետ հանձնէր Լսարանի ժողովներն Բարեօրոյց Ընկերութեան չենք մէջ ընել, և Լսարանի ժողովաւորակ վարձքն Կրօնական ժողովատեղւոյ հատկացնէր, փոխանակ եկեղեցւոյ լինելու սպանալիքն ընելու Ամերիկացիին: ԱՇՏՏ

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ Ի ՊՈՍԹՈՆ

Յունվար 15.

Բաղադրի Հայ Բարեօրոյց Ընկերութեան տեսնապետ Տիար Օսկան Աթաշեանի տրիկնոջ նախաձեռնութեամբ ու կարգադրութեամբ նուագահանդէս մը կատարուեցաւ

այսօր իւր տեսակին մէջ գրեթէ անման յաջողութեամբ: Հանդէսը տեղի ունեցաւ Հայ. զբոսարանի ընդարձակ սրահին մէջ, ինկրկայութեան երկուսն ըզուրթեան: Երկու կողմին կանոնաւոր պատրաստութիւնը ցոյց տուաւ Տիկին Աթաշեանի ջանքերն, նուրբ ճաշակը և դրամի ու ժամանակի գոհողութիւնները: Ամբողջ երեք ժամեր սրնգի, ջութակի և դաշնակի քաղցր նուազները մուսկնի տուին մեզ պահ մը մեր խորունկ վիշտերը:

Հանդէսէն վերջ, Պրն. Գ. Գալէճի քերական առաջարկութեամբ, ժողովն յատկապէս շնորհակալութիւն յայտնեց Ամերիկացի երգիչ խումբի անդամներուն: Հանդիսականները նաև շնորհակալութիւն յայտնեցին Տիկին Աթաշեանի: ԿԱՐՄԻՐ ՎԱՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Ն Ա Ջ Ա Տ Ո Ւ Ի Կ Ա Ր Վ Ա Ն Ե Ա Ն
388 Յոր. Ա. Ֆիլի. Նիւ Եորք

Պատու ունիմ ծանուցանել թէ նոր կարգադրութեամբ ճաշարանապիտի գոհացուէն ամէն յաճախորդներ: Ապագիկ չենք տար, որովհետև մեր գները շատ ատան են: Պօստ—Նախաճաշ, օրը 3 պնակ կերակուր \$1.50: Նախաճաշ հաւթով \$1.80. \$3.50ի թիքէթը \$2.50ի կերակուրներու պնակը 10 սէնթի: Անգործ և կարօտ անձերու պօտարը \$1.25 կը հաշուենք: Ճաշարանը գիշեր մինչև ժամը 12 բաց է:

Բ. ՄԱՐՈՒԹԵԱՆ.

Հ Ա Յ Գ Ի Ս Վ Ա Ճ Ա Ռ
Թիւ 239 Իսթ. 27րդ Փողոց Նիւ Եորք
Պատու ունի ծանուցանել թէ գիւրութիւն ունի բերել տալ ամեն տեսակ Հայերէն գրքեր գոհացուցիչ պայմաններով:
Կը վաճառէ այժմ
Հայ. պատ. Բերական Գին 10 սէնթ
Բերականութ. Սարճանեանի 30 "
Պատմութիւն ժինէվիլի 30 "
Լուծեալ սէր 30 "
Անգլ. Զրուցարարութիւն 30 "
Յանձնարարութիւնը ճշդիւ կը կատարուին.

Ճ Ի Ի Լ Ի Ը Ա Հ Ե Յ Ն
Վ Ա Ճ Ա Ռ Վ Ա Ն
Ծխախոտի, առաջնակարգ սիկարի և Սիկարէթներու
Թիւ 592 Յոր. Ա. Ֆիլի.
Ելեցէք ՏԻԳՐԻՍՍԵ Երբ գնէք

Հ Ի Բ Չ Օ Լ Ա

HIRSOLA
A HAIR FOOD
FEDS, STRENGTHENS, CLEANS AND ADORN THE HAIR, DESTROYS ALL DISEASES OF THE SCALP AND REMOVES DANDRUFF.
IT NEVER FAILS!
H. KOORIE & CO., New York.
Կը զօրացնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը զոյգրեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը:
Միանգամ վարձել ըստական է սաղեղին արժէքը գիտնալու համար, որ արեւելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի միջոցով:
Կը ծախուի բոլոր գեղազորներուն քով:
Գին 50 Սէնթ միայն:
Կարելի է ստանալ նաև Հայկական գեղարանէն — Ի Թիւ 472 Յոր. Ա. Ֆիլի, Նիւ Եորք:

ՅՈՐԴԱՆԱՆ ԵՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ԵՒ Յ Ա Կ Ո Ր Թ Ք Թ Ե Ա Ն

ՃԱՇԱՐԱՆԱՏԻՍՐԻԲ
Թիւ 154 Իսթ. 27րդ Փողոց

Մեր գիւրերն քիչ մը բարձր են, վասնզի մեր կերակուրներն մաքուր են, ու գործածուած միսն ու բանջարեղէններն թարմ և ընտիր: Մեր խոհարարը փորձառու արուեստագէտ մ'է: Ուտելիքը մարդուս կեանքին հետ գործ ունի, այս մասին խնայողութիւն ընելը գերեզման անապարել կը նշանակէ: Կարժէ՛ք քանի սէնթ խնայելու համար կեանքը վրտանգի ենթարկել:
Այն Հայերն որ կը փափաքին իրենց Ամերիկացի բարեկամներն արեւելեան ճաշի հրաւիրել, այս ճաշարանն միակ վայրն է ուր կրնան գոհացում գտնել:


ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ

Ցերերը Տպագրութիւն
Մաքուէլ Սըմբըրիւ
Հրատարակիչ

Կը բողոքանայ 25 սէնթովը հատարներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ միայն:

Սոցա գինն է,
Կտակեայ կազմ 62 սոյլ. 50 սէնթ
Կէս կաշիկապով 87 " 50 "
Փառակազմ 100 "

Առաջին տեսակէն կը զրկուի անոնց որք յանձն կուտան վճարել ամբողջ 2 տար 50 սէնթ: Երկրորդն ամսով ճարն է 3 ու կէս տար, իսկ վերջինն 4 տար:
Այս Համագիտարանն Ամերիկեան միակ արտօնեալ տպագրութիւնն է. միացեալք անկատար են ամեն կերպով: Մանրամասնութեանց համար դիմել իմ բողոքութեանս:



Յ Ա Կ Ո Ր Ի Ն Ի Բ Պ Ե Կ Ե Ա Ն.
(Երկրայայտոցիչ)
ՈՒԻԼԸՄ Պ. ԲԻՕՂԸՐ ԵՒ
Ե Ղ Բ Ա Ր Տ,
Վ Ա Ճ Ա Ռ Վ Ա Ն Ե Վ
Գինի, Օղի, ռգելից ԲՊԿԻԿԱՅ ԵՒ.
Թիւ 202, 204 Իսթ. 29րդ Փողոց,
ՆԻՒ ԵՈՐԻ, Ն. Ե.

Պատու ունի ծանուցանել արգոյ Հասարակութեան թէ իւր վաճառած ըմպելիքներն ոչ' միայն փորձեալ և անխորդախ են, այլ և զիւրամատչելի են ամէն զատակարար անձանց:
Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, ասիական, Գալիֆորնիայի և սանկալիան ամէն տեսակ ուիսքի, օղի, գինի, չամբանիս, մաթիքայ, գարնուր, պրանտի, ախիթի և այլն, իրենց ամեն տեսակներովն:

Փափաքողաց գներու ցուցակը կը զրկուի առանց ո' և է ծախիքի:
Յանձնարարութիւնը կը կատարուին ամենայն ճշդութեամբ և փութով: Բաղադրի մէջ ապրանքներն ձրի կը զրկուին, իսկ քաղաքէ դուրս ձրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է:
Ըմպելիքներ կը վաճառուին թէ' մեծ և թէ' փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով: (Հօլմէյլ անտրիթ էլ):
Մեր յաճախորդք երբ չի հաւնին իրենց գնած ըմպելիքներուն, յանձն կուտենք զայն փոխել, եթէ պակասած ու վնասուած չըլլան:
Ըմպելիքներ կը վաճառուին չիւժով, կալթով, սակառով և յատուկ սնտուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր:
Դիմել յիշեալ հասցէին կամ
Յ. Ն. ԽԵՐՊԵԿԵԱՆ,
535 ՈՒԷՍՏ 57րդ Փողոց, Ն. Ե.